Հավելված N 2
2024.թ. «22» «01»
կնքված N «1032-11003/24-ԵՃ-2» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | N «1032-11003/24-ԵՃ-2» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ) |
| Միջոցառման իրականացման ժամանա-կահատված | 03.01.2024-31.12.2024 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2024-30.06.2024 |
| Ներկայացման օր | 11.07.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Ծրագրի համակարգող Արտակ Վերդյան |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածում ըստ աշխատանքային պլանի և պայմանագրի թիվ 7 հավելվածով նախատեսված էին հետևյալ գործողությունները՝

***Գործողություն 1***

Մշակել ՄՍԾ ՏԿ-ների կողմից էլեկտրոնային փոստով շահառուների ուղեգրումները:

***Գործողություն 2***

Կազմակերպել շահառուների ամենօրյա (շաբաթական 5 օր) սննդի սպասարկումը, ինչպես նաև չոր մթերաբաժնից բաղկացած փաթեթների բաշխումը, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984- Ն որոշման N 1 հավելվածի 29-րդ կետի սահմանված պահանջներին:

***Գործողություն 3***

«Հուսո տան» կայքում, Հիմնադրամի Ֆեյսբուքյան էջում պարբերաբար լուսաբանել Ծրագրի ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

***Գործողություն 4***
Ապահովել սննդի անվտանգությունը Ծրագրի ողջ ընթացքում:
***Գործողություն 5***
Ապահովել շահառուների համար բարենպաստ միջավայր հասարակության կողմից անտեսված լինելու կամ մենակության զգացումը հաղթահարելու համար:
***Գործողություն 6***
Բարելավել շահառուների ընդհանուր հոգեբանական վիճակը:
***Գործողություն 7***
Ապահովել շահառուների համար մշակութային արժեքների հասանելիությունը նրանց համար զանազան մշակութային միջոցառումներ կազմակերպելու միջոցով:
***Գործողություն 8***
Ծրագրի բարեհաջող իրականացման նպատակով մեկտեղել ջանքերը մարդկային ներուժի՝ կամավորների ներգրավման, նյութական և ֆինանսական միջոցների հանգանակման միջոցով:
***Գործողություն 9***
Բարձրացնել Ծրագրի հետագա ընթացքի արդյունավետությունը:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատան-քային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի շրջանակում Հիմնադրամի կողմից իրականաց-վել են հետևյալ գործողությունները՝
**Գործողություն 1**
Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամը պաշտոնական էլեկտրոնային հասցեով ստացել է ընդհանուր առմամբ 40 շահառուի ուղեգրումներ (Հավելված 1), ընդ որում.
- ✓ **Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն ՄՍԾ-ից՝ 22**
- ✓ **Էրեբունի և Նուբարաշեն ՄՍԾ-ից՝ 9**
- ✓ **Կենտրոնի և Նորք Մարաշ ՄՍԾ-ից՝ 9**

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի կողմից տարեցների հաշվառման տեղեկատվական համակարգ է ներբեռնվել 39 շահառուի տվյալ:
**Գործողություն 2**
Հաշվետու եռամսյակում ապահովվել է ընդհանուր առմամբ 101 շահառուի սպասարկումը, որից 40-ը տեղում ճաշել է ամենօրյա (շաբաթական 5 օր) ռեժիմով (Հավելված 2), իսկ 61-ը ստացել է չոր մթերաբաժին (Հավելված 3): Ծառայությունները մատուցվել են համապատաս-խան ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն որոշման N 1 հավելվածի 29-րդ կետի սահմանված պահանջների:
Հիմնադրամը որպես նվիրավություն ստացել է բանջարեղեն (Հավելված 4)՝ համաձայն Ֆինանսական նախահաշվի N 2.1 ենթակետի, մասնավորապես.

Նվիրաբերող՝ Կարեն Սայադյան
- ✓ **170 կգ գազար,**
- ✓ **145 կգ կաղամբ,**

- ✓ **95 կգ բազուկ,**
- ✓ **15 կգ կարտոֆիլ:**

***<u>Գործողություն 3</u>***

«Հուսո տան» պաշտոնական կայքում, ինչպես նաև Ֆեյսբուքյան էջում պարբերաբար լուսաբանվել են Ծրագրի ընթացքում կազմակերպված միջոցառումները:

***<u>Գործողություն 4</u>***

Շահառուները և խոհարարները իրազեկվել են սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանների վերաբեյալ, մասնավորապես ճաշարանում անվտանգային կանոնները պահպանելու, սննդի անվտանգության և այլ կանոններին առնչվող հարցերի վերաբերյալ: Շահառուների առողջությունը պահպանելու, ինչպես նաև անվտանգությունը ապահովելու առնչությամբ ևս անհրաժեշտ քայլեր և միջոցառումներ են ձեռնարկվել, մասնավորապես կենտրոնի տարածքում արգելվում է ծխախոտի օգտագործումը, անհրաժեշտ ուշադրություն է հատկացվում շահառուների սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը՝ ճաշարանից օգտվելիս՝ առողջությանը սպառնացող հետագա հնարավոր ռիսկերի կանխարգելման համար:

***<u>Գործողություն 5</u>***

Շահառուների համար Հուսո տանը ստեղծվել են բոլոր պայմանները միմյանց, աշխատակիցների ու կամավորների հետ ազատ շփվելու, իրենց հուզող հարցերով ու կարծիքներով կիսվելու, անհրաժեշտ խորհրդատվություն ու աջակցություն ստանալու համար: Բացի այդ, կազմակերպիչների կողմից պարբերաբար իրականացվել են լուսաբանման աշխատանքներ Նախարարության և ՄԾԾ ՏԿ-երի կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ:

***<u>Գործողություն 6</u>***

Շահառուների հոգեբանական վիճակի բարելավման նպատակով Հիմնադրամի հոգեբանը կազմել է հարցաշար, որով բացահայտվել են պատահականության սկզբունքով ընտրված շահառուների հոգեբանական խնդիրները: Հոգեբանի կողմից կազմվել է հաշվետվություն, որում ներառվել են նաև շահառուների հոգեբանական վիճակի բարելավանն ուղղված առաջարկներ (Հավելված 5):

***<u>Գործողություն 7</u>***

Ապրիլի 1-ին Սուրբ Զատիկի տոնի կապակցությամբ «Հուսո տանը» Ծրագրի շահառուների համար կազմակերպվել է տոնական հյուրասիրություն՝ Զատիկի ավանդական ուտեստներով: (Հավելված 6):

***<u>Գործողություն 8</u>***

Հիմնադրամը ներգրավել է տարբեր անձանց, ովքեր կամավորական սկզբունքներով պարբերաբար աջակցել են Ծրագրի ընթացիկ աշխատանքներին, մասնավորապես՝ ճաշասրահի դասավորման, մեծաքանակ սննդամթերքի տեղափոխման, շահառուների այցելությունների գրանցման, հերթերի կարգավորման, միջոցառումների կազմակերպման և այլ աշխատանքներում:

***<u>Գործողություն 9</u>***

Ծրագրի ընթացիկ աշխատանքների զարգացման և արձանագրված արդյունքների վերաբերյալ պարբերաբար հրապարակվել է տեղեկատվություն Հիմնադրամի սոցիալական էջերում, ինչպես նաև իրազեկման աշխատանքներ են կատարվել Ծրագրի շահառուների շրջանում: Իրազեկման աշխատանքների շնորհիվ ներգրավվել են նվիրատուներ:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Հիմնադրամի պաշտոնական կայքում՝<br>1. https://houseofhope.am/news/660a9b1c1cd1635d2647dd3d/<br>2. https://houseofhope.am/news/66192527bed585ec0b4f478e/<br><br>Ֆեյսբուքյան էջում՝<br>1. https://www.facebook.com/photo/?fbid=446950004670979&set=pcb.446952631337383<br>2. https://www.facebook.com/photo/?fbid=445141461518500&set=pcb.445141728185140<br>3. https://www.facebook.com/photo/?fbid=438421522190494&set=pcb.438422022190444 |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում տեխնիկական խնդրի պատճառով հնարավոր չի եղել ներբեռնել 1 շահառուի տվյալ Տարեցների հաշվառման տեղեկատվական համակարգ: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

***Գործողություն 1***
Մշակել ՄՄԾ ՏԿ-ների կողմից էլեկտրոնային փոստով շահառուների ուղեգրումները:
***Գործողություն 2***
Կազմակերպել շահառուների ամենօրյա (շաբաթական 5 օր) սննդի սպասարկումը, ինչպես նաև չոր մթերաբաժնից բաղկացած փաթեթների բաշխումը, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984- Ն որոշման N 1 հավելվածի 29-րդ կետի սահմանված պահանջներին:
***Գործողություն 3***
«Հուսո տան» կայքում, Հիմնադրամի Ֆեյսբուքյան էջում պարբերաբար լուսաբանել Ծրագրի ընթացքում կազմակերպվող միջոցառումները:
***Գործողություն 4***
Ապահովել սննդի անվտանգությունը Ծրագրի ողջ ընթացքում:
***Գործողություն 5***
Ապահովել Ծրագրի համար անհրաժեշտ սննդամթերքի և այլ ապրանքների ձեռքբերման թափանցիկությունը, դրանց պահեստավորման և պահպանման պատշաճ պայմանները, ինչպես նաև սպառման հաշվետվողականությունը:
***Գործողություն 6***
Ապահովել շահառուների համար բարենպաստ միջավայր հասարակության կողմից անտեսված լինելու կամ մենակության զգացումը հաղթահարելու համար:
***Գործողություն 7***
Բարելավել շահառուների ընդհանուր հոգեբանական վիճակը:
***Գործողություն 8***
Ապահովել շահառուների համար մշակութային արժեքների հասանելիությունը նրանց համար զանազան մշակութային միջոցառումներ կազմակերպելու միջոցով:
***Գործողություն 9***
Ծրագրի բարեհաջող իրականացման նպատակով մեկտեղել ջանքերը մարդկային ներուժի՝ կամավորների ներգրավման, նյութական և ֆինանսական միջոցների հանգանակման միջոցով:
***Գործողություն 10***
Բարձրացնել Ծրագրի հետագա ընթացքի արդյունավետությունը:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Պարբերաբար բանակցություններ են վարվել մատակարար կազմակերպությունների և անձանց հետ ապրանքները լրացուցիչ զեղչ գներով ձեռք բերելու ուղղությամբ՝ դրանց որակի չափանիշների պարտադիր պահպանմամբ: